

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար 12 Յր.
Տարեկան 6
Վեցամսեայ Արսասահմանի համար տարեկան 15
Վեցամսեայ 8

Աստիկայի համար 3 Տր.
Տարեկան 1.50
Վեցամսեայ

Դանուշակ տղոց արտադրանքները համար 40
Իսկ վերջին երեսի համար 20
Աստիկայի համար 20 0/0 զեղչ կը լայ:

Վառակայի համար ձեռք 40 սանթիմ

ՉԱՐԺՈՒՄ

ԻՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂՊԵԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԻՏ ԻՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԻՆՍԻՆ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Նախակ էլ որոշակի
հարազատական հաս-
ցիկն .

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Արսասահմանի համար
ձեռք
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար
ձեռք
(15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք եւ չեմ տուի

ՉԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ ԳՐՈՒՄ ԵՒ ԿԱՆԿԱԿ ՎՃԱՐԷ

ԽԱՅՏԱՌԱԿ ՄԱՀ

Դեռ երեկ հնչեցան ներքին երկու հատուածներին պատկանող անդամները իրար հետ զրկախառնում և ուրախութեան երգերով ու բացագանչով թիւննեցող աշխարհ էին դարձանում:

Այսօր նոյն այդ մարդիկը իրար դրկում են դաշտինեցող ու հրազեններով, և, ուրախութեան փոխարէն, մահաւան խախտող ու անէծքով են գի մատուցում միմեանց:

Այսպիսի մի անըմբռնելի փոփոխութիւն կարող է տեղի ունենալ կամ վայրենի, կամ թէ քարոյապէս ընկած ընկերութիւններին ու հասարակութիւններին մէջ:

Միութեան ձախող վերջից յետոյ անպի ունեցած փոխադարձ հայհոյանքները, լուսանքները չը բաւեցին հայ յեղափոխութեան այդ մրուրին. և նա այսօր գազան դարձած արեան, իր անդամների արեան մէջ է լողում:

Ու հնչակեան ամբողջը, իր մէջ պարունակելով հայ ժողովրդի ամենաստորին խաւերի կատարելատիպ նմուշները, հանգիստ տես է այդ եղանակեան ցուցահանդէսին, որով իցոյց է դրվում միայն այն, ինչ որ կարող է արատաւորիչ հայի և հայ յեղափոխութեան անունը:

Այսպիսի բարոյական անկում երևակայել անգամ տնհնարին է. բայց այդ անկումը այսօր փաստ է շնորհիւ հնչակեան վարիչների մեծամասնութեան, որոնք հայ յեղափոխութիւնը շինեցին իրենց կրքին և եսին բաւարարութեան տալու միջոց: Զարմանում ենք որ դեռ միամիտներ կան որոնք կարծում են թէ այս վիճակին հասած մի յեղափոխական մարմնից կարելի է հայրենիքի համար ունեւ պատուար գործ սպասել: Հնչակեանութիւնը մեռնում է իր սեփական արեան ու լուսանքների մէջ լուրջաբով. մեռնում է իր անցեալ փառքն ու նշանակութիւնն էլ

չնչելով, և ներկայ վարիչները բոլորովին անկարող են այդ կուսակցութիւնը փրկել այն խալտառակ անկումից, որի նմանը դեռ չի ունեցել աշխարհիս ոչ մի յեղափոխական կուսակցութիւն:

Այդ այսպէս լինելուց յետոյ մեր ժողովրդին մնում է անտարբերութեամբ գիտնել հետու քաշվել այդ մեծելից, որին նոր կեանք տալ չի կարող ոչ մի դարման:

ՎԱՐՊՈ

ԲՍԱՆՈՒԹ ԱՆՏՈՒԿԻ ԽՆԳԻՐԸ

Տարիներէ ի վեր այս խնդիրը Սասար արարածներին ձեռքում գէշ դարձաւ դաշնակցականներին, մասնաւորապէս ինձ մըրոտելու շար գիտաւորութեամբ:

Ի՞նչք միչեւ օրս անյարմար դատեցինք մեր կողմից այս խնդրի մասին որոշ կերպով խօսելու, որպէսզի կողմակերպութեան ձեռնհաս մարմինները ազատ ու անկաշկանդ կերպով կարողանան այդ խնդիրը քննել և անհրաժեշտ եղածը անօրինել:

Զանազան խորձանքներին տեղի չը տալու համար մենք մեր մեղիքները նոյն իսկ այդ գործի քննիչներին մէկի պայտօնը ստանձնեց, որ առաջարկվեց մեզ կողմակերպութեան կողմից խնդրի ծագման օրերում:

Խնդիրը ծագած առաջին օրերում իսկ Դաշնակցութիւնը արդէն միջոցներ էր ձեռք առել գործը շուտով կարգադրելու համար, բայց թրքածին Գուրպէթ օզլուի եւ Խաչագողապետ հերոսի անպիտօրէն հրապարակ պալը խնդիրը կնճռոտեց և մի քանի ամուսն փոխարէն տարիներ պէտք եղան խնդիրը կանոնաւոր և Դաշնակցութեան համար արդիւնաւէտ կերպով կարգադրելու համար:

Այսօր, ինչպէս իմանում ենք

ստոյգ ազրիւրներից, Դաշնակցութեան ձեռնհաս մարմինը այդ խնդրի մասին որոշ եղբակցութեան է յանգել, և շուտով իրողութիւնը պէտք է յայտարարէ կուսակցութեան օրգանում:

Աւելորդ չենք համարում նաև յայտարարել որ նոյն ստոյգ ազրիւրներից իմանում ենք թէ Դաշնակցութիւնը գողացված ապրանքի կարեւոր մասը դեռ երկու տարի առաջ ետ գրաւած է, իսկ մնացեալի փոխարժէքը ստանալու վրա է:

ՎԱՐՊՈ

4 Յունիս 1903

Վառնա

ԶԵՅԹՈՒՆԻ ՀԱՄԱՐ

(Շա. Ասիտոյ քիւնն եւ վերջ)

- Կայարան Թիրնովա-Սէյմէն
Տր.
Տրիւն Աւարայր 5.
Անգղ 3.
Բազէ 3.
Պանդուխտ 1.
Հայրենասէր 1.
Վարդ 2.

- Կայարան Սքօշէլէֆօ
Տր.
Յ. Պասմաճեան 5.
Յովհաննէս Պաշտուրեան 2.
Սաֆար Բոտրիկեան 1.
Պաշիկ Յովհաննէսեան 1.
Պաղտասար Պոլէտեան 1.
Միսակ Տօնօեան 1.
Յարութ Գրիգորեան 1.
Պաշիկ Պարսխանեան 1.
Յակոբ Քերովրեան 2.50
Պաշիկ Յարութիւնեան 1.
Հրիսթոս թէրզիէֆ 1.
Սթօյքօ Թօտորոֆ 1.
Նշանեան Եղբարք 3.
Սրբիսթօ Բէթքօֆ 0.50
Տօպրի թօշեֆ 0.50
Աթանաս Մանօրֆ 0.50
Անընթէնի 0.30
Գ. Յ. Սարաֆեան 2.
Սիւսանթօֆ 1.

- Կայարան Պորխովկա
Տր.
Յ. Մ. Գանթարեան 5.
Ակպայիւ մը 2.

- Ա. Մէրամէթճեան 4.
Կարապետ Թօքաթլեան 5.
Միքայէլ Կարապետեան 1.
Պաշիկ Պետրոսեան 4.
Պաշիկ Կարապետեան 1.
Յովակիմ Կարապետեան 1.
Փիլիպպոս Յովհաննէսեան 0.50
Յովհաննէս Մարտիրոսեան 0.50
Մինաս Անդրէասեան 1.
Համբարցում Սիմոնեան 0.50
Արթիւր Մէլգոնեան 0.50
Սարգիս Առաքէլեան 1.
Սարգիս Մամասեան 0.50
Կարապետ Գալուստեան 0.50
Գէորգ Սէնէքերիմեան 2.
Ասատուր Գօրքմազեան
Կարապետ Պետրոսեան 1.
Մարտիկ Թոմասեան 0.50
Պետրոս Ղազարեան 0.50
Յովնան Թաթէսեան 2.
Արթիւր Ա. Փափազեան 1.
Վարդ 5.
Կ. Սարաֆեան 1.
Ս. Մ. Սարգիսեան 1.
Թ. Լուվրովեան 1.
Իօսթա 2.

ՄԱՆՁՈՒՄԷԻ ԹՂԹԱԿՅԻՆ ԵՒ ԽՐԱՐԱՆԵԱԿՆԵՐՈՒՆ

Պուսոյ Մանգուսէ թերթին 28 մարտ 5 8 թիւին մէջ երեւցած թղթակցութիւն մը, տեղիս ազգային գործերուն անկերպարան վիճակին իբր պատճառ ցոյց կուտայ, Տ. Աստուածատուրեանն ու մեզի եւ աւելին, կը ամբաստանէ մանաւանդ մեզի թէ զպրօցի համար գնուած չէմք մը պարտքին հատուցմանը համար կիւրիցի Միսակ էֆ. Մարտիկի նախաձեռնութեամբը հաւաքուած 4000 ֆրանքի զուտ մը յանձնուած է մեզի որուն ոչ հաշիւը կուզենք տալ եւ ոչ ալ դրամը:

Թղթակցութիւնը ազոտս կիրքերու, կուրացնող եսի արդիւնք, լրբօրէն եւ շատ ալ ուղորմելի կերպով հիւստեած ստուրթիւն մըն է, որ տարբեր արդիւնք մը չունենար այլ հեղինակին ամօթ մը ալ եթէ խպնիլ ալ գիտէ:

Թղթակցութեան հեղինակին կամ թերեւս հեղինակներուն թերին չափը աւելի կանուխէն տուած պիտի ըլլայինք եթէ պահ մը յուսուրու բարեմտութիւնը չունենայինք որ Միսակ Մըրթեան այդ կիրքիցի էֆէնտին մեր կողմէ ապրիլ 20 թուա-

կիր ապահովագրեալ նամակով եղած շատ արդարացի հրաւերին պիտի պատասխանէ. հրապարակաւ հերքելով, իբր պարտաւոր ըստ իր անձնական անկողնակալ մարդ. թէ ինքը 4000 ֆրանք չէ յանձնած. սակայն չունեցաւ Միսակ էֆ. Մըսըրեան այդ պարկեշտ մարդու ընթացքը եւ հարկադրեց մեզ հրապարակ գալ, մենք ալ համոզուելով շատերուն պէս թէ իրմէն այդ օրինակ ընթացք մը սպասել անտեղի էր :

Անցնինք իրականութեան Մըսըրեան էֆէնտիի ձեռամբ հանգանակութիւն մը չէ եղած, գոնէ մենք չենք գիտեր, եթէ կայ ըսել է 4000 ֆրանքը իր քովը է, եւ այն ատեն պէտք է իր պաշտօնակիցներն ու ազգը ասոր ալ հաշիւ պահանջեն իրմէն ուրիշ հաշիւներու հետ. որոնք ալ ի հարկին տալու պարտաւոր պիտի տի ըլլայ :

Ստորագ է որ հանգանակութիւն մը կատարուած է պաշտօնապէս, քանի մը անձերու նախաձեռնութեամբ, որոնց հետ Մըսըրեան էֆէնտի պատահմամբ քանի մը անգամներ գտնուած էր. եւ այդ հանգանակութեան արդիւնքն ալ մեծ մասամբ յանձնուած է պանքային որոշ թուականներով, որոնք կը քտնուին նոյն հաստատութեան արձանագրութեանց մէջ :

Հաշիւը փոխանակ մեզմէ ուղղուելու պէտք է Մըսըրեան Միսակ էֆ այդ կիրիցի էֆէնտիէն պահանջուի, որ մնաներ ալ տուած է ազգին հետեւեալ պարագաներու մէջ.

Ի՞նչ պահած է հանգանակեալ արծաթ գրամները երկար ատեն առանց պատճառի եւ օրը օրին չէ յանձնած պանքային հակառակ իր պաշտօնակիցներուն պահանջին, եւ ով գիտէ ինչ մուծ հաշիւներով, եւ հազիւ վեց ամիս վեջը յանձնած է տեղը եւ

այդ յապաղումէն աւելի եւ կամ մօտ 300 ֆր. մնաս մը գոյացած է պարագայ տեղը բանած տոկոսներէն եւ ոսկի ու արծաթի ելուէջէն եւ այսօր ազգին պարտքը իր պատճառաւ 300 ֆրանք աւելի կը մնայ :

Եւ ինչո՞ւ մինչեւ այսօր իր քովը կը մնայ վերջին հանգանակութեան արդիւնքէն 400 ֆրանքը եւ յանձներ պանքային պաշտօնապէս ազգին անունովը :

Ինձ անկ չէ այս մանրամասնութեան մէջ մտնել. այլ կը հրաւիրեմ իր պաշտօնակիցները որ յանուն ազգին շահուն եւ արդարութեան իրենք խօսին :

Գալով տեղւոյս ազգային դործերու խօսանակ վիճակին պատճառ եւ զողներն ոչ թէ Տ. Աստուածատուրեանն եւ մենք ենք, հապա կիրիցի Արապեան Պողոս ազան, այդ եւս ասեմ թայց ողորմելի ծերուկը եւ իւր փեսան Միսակ Մըսըրեան, այդ կիրիցի էֆէնտին, ոչ միայն իրենց պարտին ընթացքովը ազգային գործերը խանգարած եւ ժողովուրդը ուժացուցած են եկեղեցիէն ու վարժարանէն, որ փակ կը մնայ շուրջ մէկ տարի հետէ. այլեւ Պողոս Արապեան խնդրոյ առարկայ եղած տանն ալ վարժակալն ըլլալով հանգերձ հակառակ իւր անձնատուութեան չէ վճարած վեց ամիսէ հետէ կանխիկ վճարելիք վարձքը, որով ազգը պարտաւորուած է անտեղի տոկոսի տակ ճնշուլ :

Առ այժմ այսպիսի բաւական կը նշկատեմ, իր եւ իւր արբանեակներուն հասկնելու համար թէ քաղութիւնը ստուերին տակ գործել չէ չէլ եթէ ուրիշ համարձակութիւն թող յայտնի ստորագրութիւնով իջնեն ասպարէզ հրապարակաւ ցուցնելու համար մեր եւ Աստուածատուրեանի ազգամասն ձեռնարկները. հակառակ պարագային ամօթն ու նախատինքը

անոր երեսին որ ոչ ըրածը գիտէ եւ ոչ ալ ըրածին հետեւանքը կրնայ կոչուլ :

Եղարտ Թորիկեան

30 մայիս 1908

Պարկապ

Յ. Գ. Երկու օրինակ ալ ղրկած ենք «Իրաւունք»-ի եւ «Հայաստան»-ի :

ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ «ՉԷՑԹՈՒՆ»-Ի ԱՌԹԻ

Տոպրիչիցիներու «Չէցթուն»-ի հանգանակութեան ցանկը եւ անոր կցուած խմբ. գիտողութիւնը աչքիս առջին է որուն ամէնէն վարի ծայրը «Արսէն ուստա (Թաշճի)» 1 ֆր. ոչանակուած : Որն որ առիթ կուտայ ինձ - թէ եւ շատերու համար անհաճոյ գուցէ, բայց ինձ նուիրական պարտականութիւն - ծանօթացնել զի կը հայ ընթացողներու. այդ վաթսուամեայ ծերուկը, ազգաւ գարամանցի յոյն մէ, ու նիւթականի տեսակէտէն շատ աննախանձելի, Բայց տեսէք, սրտի ազնուութիւնը ուր տեղեր ապաստան կը գտնէ Յանկին մէջ, ինչպէս դատն ախրութեամբ նկատած էր պատուարժան խմբագրութիւնը, կարգ մը փայլուն (միթերանոցներու) աչքեր, որոնք հայու անուն ու արիւն կը կրեն, երկ-երկու ֆր. ով իրենց պարտականութիւնը կատարել կարծած են, ու շատ մը աչքի զարնող հայ-հարուստներ ալ բողոքովին բացակայ են այդ ցանկին մէջ : Իոկ ազատաբէր Չէցթունն ինչ վարի խորիստ հառաչանք կերթայ արձաքանքել օտար. աղքատին, Արսէն ուստաներու զգայուն արտերուն մէջ :

Անդին հայ-հալուազէտ հարուստը իր տուած բողոքովին աննշան նպաստ

ՀԱՅՐԱՍՊԱՆԸ

(ՊԱՏԿԵՐ)

Նուիր հայ պատուելիներուն



Աշնան ցուրտ ու փոթորկալից գիշեր մըն էր : Ամպերու սեւ ու թանձր կուտակները, սփռուելով մութ երկնակամարին վրայ, ամբողջ մութութիւնը քառասոյնի խաւարի մը մէջ ձգած էին, ու մերթ կայծակներու փայլատակուէն էր որ, հազիւ պղտիկ լոյս մը սփռուելով, կը ջանար այդ թանձր խաւարը պատռել : Ամբողջ քաղաքը գիշերուան այդ պահուն, իր խաղաղ ու հանգարտ քունով կը քնանար, առանց փոյթ ընելու որոտու մտերու եւ հովին այն ուժգին բազմաւնեցող, որոնք քիչ մը հեռուն տուներ ու ծառեր կը տապալէին անխնայ :

Ու այս աղջամուղջին մէջ, մէկ նուազկոտ լոյս մը միայն, փարոսի նման կը մնար անշարժ, քաղաքէն դուրս, ամալութեան մէջ տեղ գուրս ցցուող հսկայ տան մը վերնաշարի սենեակներէն մէկուն մէջ :

Կանթեղին գէմը նստած էր ալեւոր ծերուկ մը, միտ միտակ, ու կարծես ինքն իրեն խօսելու շարժումներ կընէր, մերթ ձեռքերը կը շարժէր, մերթ կը բարկանար, կը ծիծաղէր, մէկ կողմ կը դառնար, յետոյ միւս կողմ եւ այսպէս շարունակաբար :

Ու դեռ այս գրութեան մէջ էր, երբ յանկարծ ականջին ձայն մը հասաւ. — մէկը դուրս կը դարնէր անապարտ : «Ո՞վ ունիմ այս ատեն եւ կող» ըսաւ ինքնիրեն ու ենթացողով թէ օտարական մըն է, կանթեղը մարելով, մութին մէջ անշարժ մնաց : Սակայն զուր ջանք. բաղիւնը անընդհատ կը շարունակուէր, մինչեւ որ, ալ բողոքովին ճարահատ լամբարը կրկին վատելով գողոջողուն քայլերով վար իջաւ ու դուրս բացաւ :

Ինչ ահաւոր ստուերով մըն էր որ զգաց ծերունին. երբ այդ քահանայի երեւոյթը ունեցող մարդուն պատմութեան տակէն դուրս ցցուող հրազանը նկատեց. բայց չուզեց իր զարհուրանքը յայտնել հարցուց. — Ո՞վ ես, բարեկամ :

— Հայրենակից մը. օտար տեղէ կուգամ, պտտախառնեց եկորը խեղճուկ եղանակով մը :

— Ո՞վ զրկեց քեզ հոս... Ինչ կուգես... :

«Միտակ հոս լոյս տեսայ եւ եկայ, գիշերելու տեղ մը, ինչքեմ :

Ու այս բոլոր ժամանակը ծերունին որ խորագնդին եկորին չորս կողմ զիտելէ վերջ նկատած էր փամփուռներու շարքը մըն ալ, այլեւս զլիտովին սրբապաշտութիւն մը սեպելով այդպիսի մէկու մը հիւրընկալութիւնը, մինչ կը պատրաստուէր դուրս գոցելով վեր ելլել, զարմացու մով տեսաւ թէ այդ անկողն հերը կը ջանար ակամայ ներս մտնել :

— Աւագաններու տեղ չունիմ, մոլտաց ճերուներն քիչ մը արիւնալով, ամէն մարդ քնացած է, հիմա կարթնեան :

Բայց ան արդէն վեր ելլել սկսած էր. եւ ծերունին կը մնար միայն ձեռքերը վեր բարձրացնելով «գորութիւն եւ համբերութիւն» խնդրել երկնաւոր հօրմէն :

— Ինչ գործ ունիս հոս, ըսաւ, տանտէրը կըր հունդարտ քայլերով սենեակ մտան :

— Ա՛յն կարաշեմ, հիմա մի՛ հարցներ այդ, պատասխանեց ճամբորդը հեռու տեղերէ կուգամ :

— Բայց այդ հրացանը... այդ գէնքը... այդ արիւնը... զոչեց սարսափահար :

— Ա՛յն, կրկին խոր հառաչ մը քոչեց, շատ բաներ պատահեցան... :

— Անունդ ի՞նչ է :

Եկորը քիչ մը այլայլեցաւ. արագ արագ սկսաւ գունափոխուիլ. քիչ մը դուռնառեցաւ. հեղ մը շրթունքները խաղայ սկսան տենդային օտարութիւնը, ու վերջապէս, կարծես հրեղէն շանթի մը բոցերով, աչքերը փայլել սկսան իր կարճած զեմքին վրայ, ու գրեթէ անզգայ, իր սրտին մաղձը դուրս պոսթկաց, որ ջանասցած էր մինչեւ այդ րոպէն ծտփուկ պահել :

— Սմբատ... Որդիք... եւ գեռ «հայր» կ'աշուելու արժանի... :

— Անօրէն... անզգամ... սուրբա՛ւ... սկսաւ եկեղեկ պատուելին, գեռ

տին կրթնած սրտի անհուն գոհունակութեամբ, առանց շիկնելու կը թոյլարարէ որ իր այդ - նպատակը հեզեղ - զէրօն հաւասար նուէրին հանդիպակց կողմը իր խոշոր անունըն ու հրատարակուի : Ես պիտի խնդրէի որ ինչ տեղ բնակող հայերէ որ եթէ պիտի ձեռնարկեն նոյնանման հանգանակութիւն մը, կամ պիտակցօրէն ու զարժան տան եւ կամ ձեռնպահ մնան : Վասնզի Չէցթունը մուրացիկ մը չէ, այլ ազգային Ս. Դատին համար անվեհեր կուգ մը, որն որ սեպուհ պարտք կը զնէ մեր վրայ յարգանքով ու պատկասանքով վերաբերուի իրեն, ու ոչ կոյր մուրացիկ մը չէ ժանգոտ պնակին մէջ հալու ձեռքը նուէրներով նախատել զինքը :

Օտարներու առջեւ մեր վարկը բարձր պահենք, հա՛մ միտկ միջոցը, մենք զմեզ ինքնապատար չկացուցանելու համար, պէտք ենք խորհել այսպիսի պարագաներու մէջ թէ ինչ է մեր ըրածը :

Ալիսի-Որդեգիրը

ԴՌՈՒ ՍԼ ՄԵՐ ԲՈՎ ՊԻՏԻ ԳՍՍ

(ԱՍՍ ՆԷՅԻՐԻ)

Առ յարգելի օրիորդներ...

Հարցուց ինձ ան. «Միտակ հոս, ինչո՞ւ ես տոգունած դուն, որ այսքան ուժով ու լուրիկ զիս կ'ընդգրկես, ըսէ, ինչո՞ւ քու ջերմ շրթունքներուդ համբոյրները երկար միայն հառաչներ են :

«Դէս, ինչո՞ւ այսքան խորունկ է նայուածքդ, գիշերային խաւարի պէս, կարծես ամեն ինչ

չուզելով հաւատալ իր աչքերուն եւ ակաջներուն : Մինչ օրդին, ասելու թեան ու վիճի հաւատը նայուածքով մը, այդ դաւաճան հօր խելագար շարժումները կը զիտէր անյարգին, իր տեսած ու լսած զարչի արարքներուն վճակուն կէտը դնելու արեւարբու ըրպէն սպասելով անհամբեր :

— Ո՛ր էիր, ո՞ւր մտորեցար, ասպարհախա... կրկին լսուցաւ պատուելիին ձայնը :

— Հայրենիքի սէրը ինձի գարշեցնել տուաւ զազարակ բաղձանքներդ, մենչեց կատաղ կորիւնը. շեշտակի հօր երեսին նայելով :

— Հեռացի՛ր, անօրէն - հեռացի՛ր, աւաղակներու որջ չէ հոս... ասագողներու տեղ չունիմ... :

— Լուէ՛, հայր... ու կրիտասարդին աչքերուն բոցավառ ուժը կրկնապատկի սկսաւ :

Տուր խուլ մեռելային լռութեան մը մէջ թաղուած էր եւ պատուելիին սենեակը բողոքովին մեկուսացած ըլլալով միտներէն հօր ու զուկի միջեւ տեղի ունեցած այդ տաղնապայից խօսակցութիւնը ընաւ չէր խոսոված ընտանիքին նինջը. Հայրը տեսնելով աղուն զարհուրելի զէմքը, կրկին խօսել սկսաւ :

— Չէ՛, չեմ կրնար. կամ ատոնք մէկդի նեւեւ եւ կամ... :

— Լուէ՛... դաւաճան... :

— Չեմ կրնար... պէտք է հեռանա... ալ որդի չես... դուք անօրէններ էք :

հասկանալ կուզէ, տարածութեան մէջ անձանցով աշխարհը, շուքերու փախչող ուրուսկանները տեսնալ կուզէ:

Ուստի, ինչու մեր երջանիկ սիրոյ ուրախութիւններն անգամ չեն երգեր, չեն հրճուիր քու մէջդ, այլ կարծես կ'ողբան, ու սրտիդ մէջ իսկական թախիծը անհրաժեշտապէս կը գողգողայ ու կը հնչէ... Բերթած լարի պէս:

Ուստի, ինչո՞ւ երբոր քնքոյշ կը ձգուիս գրկիս մէջ, խելագար վախը յանկարծ կը բանայ քու աչքերուդ, սե ու խոշոր աչքերուդ գէշիւթները, եւ ինչ նախազգացում դառնութեամբ կը սեղմէ ու կը խեղդէ սիրոյդ:

Պատասխանեցի ես այն տուեան. «Երբոր քու քոյգ հեշտանքէ կը տոգոտնիմ եւ մտապ ու գորովալի մարմինս գրկիդ մէջ կը մարի, գիշերային խառնիւթ մէջէն աչքիս առջն կը ցայտի գունատած ուրուսկաններու մոտայլ ու սոսկալի ամբոխը»:

Ուստի արատաստաթոր կոյսերու ստուերներն են, սէր չի ճաշակած, բայտ չի տեսած:

«Իայց եւ այնպէս, բնութիւնը զանոնք ալ օժտած է գեղով, անոնց ալ մետաքսեայ խոպոպիկներուն մէջ գարնանային արեւի փայլուն ճառագայթները խաղացած են: Սակայն անոնք չի գիտցան ոչ համարաբաններ, ոչ սէր ու մոռցուած ամէնքէն գերեզման իջան անհետ...»

«Անոնք կ'իյննրու ուրուսկաններն են, ճակատագրէն սահմանուած տեսնալու թէ ինչպէս իրենց այրերը կ'աճ տղաքներ, զօրս խելայեցօրէն կը սիրէին, դանդաղ մարած են, եւ հասած է անխոսափելի դառն բաժանման վերջին ժամը»:

«Անօգնական տեսած են, ինչպէս հոգին լուսած է անոնց հսկանիւթ մարմինէն, անկարագրելի ցաւէ մաշած, առսւձիթ լքուած մնայած նն աշխարհս երեսօր, միայն իրենց սրտէն բղբաւած արիւնով»:

«Անկէց ի վեր անոնց մտահոգ աչքերուն մէջ կը փայլի միակ երկնային իրիձ մը, ու ծանր անոնք կը մայրին թունաւորուած տառապանքէ ու ցաւէ»:

«Սրտի մահացու ցաւով, կորուքամակ, երբուն վշտէ տոգուանամ, լուին հառաչելով, գէպ ինձ կը դիմեն»:

«Աչքերն ինչ չեն վերցնէր վերայէս... Ու ահա խելագար վախը կը սառեցնէ երակներուս մէջ արիւնս, ցաւով կը գողայ կուրծքիս մէջ սիրտս»:

«Աւելի ուժով կը փարփմ քեզ գողահար եւ հոգեկան այս ահաւոր փոթորկի տուեան համբոյրներս երկար հառաչներու կը նմանին»:

«Նուսնողով աչքերն իմ վրայ սեւեռած, այս հէգ էակներն առաջ կը դիմեն զրկու՞մի ու վշտի ուղիին վրայ, եւ մարգարէական այս սոսկալի խօսքերն ինձ կը

նետեն. «Դու ալ մեր քով պիտ' գաս, այո, գուցէ ալ պիտի գաս...»»

Թարգմանեց ՄԱՐՕ

26 1903 Փ. Պոլիս

Ա Տ Ա Ն Է Կ Ր Ի

Կենսագրական տեղեկութիւններ

Հարազատ ու թանկագին գուստրն է գասական Իտալիոյ, որուն նախորդ երգիչները—ազնուականութեան հաւատարիմ վաւակները—բոժանողիբ կերպով կերգէին միայն գեղեցիկն ու սէրը, տառնց գոնէ նոր հասկացողութիւն դնելու այս գաղափարներուն մէջ: Բայց ահա հասարակական պայմաններու զօրութեամբ, որոնք փողոց նետեցին աշխարհի ստուար բազմութիւն մը գործարաններու մէջ աշխատելու բազուկներն ծախելով, կամ խելքերն ին, կամ սրտերն ին եւ կամ մարմինն ին, ծանր թէր ու խեղճութի բանաստեղծական հայրենիքին մէջ ծնանոր գրականութիւն մը՝ ներկայացնող այս վատախառ էակները, եւ բարձրաձայն սկսաւ տարածել ազգաստեղծան շնորհատու մեղեցիկն, քաղցի աղաղակը, չրքաւորութեան հառաչը ու մեռած ոգոյն զարթնումը երկրագնտի շորս կողմը:

Ատա. Նեկրին թշուառութեան

աւագակներ էք...

Լեռով ազգադաւ հօր այդ անարգ բառերը, երիտասարդ որդւոյն հայրենասէրի հոգին փոթորկեցաւ քիչստիպութեան անզսպիկ զայրոյթով մը, եւ զոտ մը նախելով այդ ստոր էակին վրայ կարծես բոլորովին մոռցաւ սիրոյ ամէն զգացումն ու գորովը:

Ան որ իր կեանքը սուրբին ներքեւ գրած էր, անխախտօրէն սիրած իր հայրենիքին համար, ան որ դեռ քանի մը ժամ առաջ անառի իտու անկիւններուն մէջ, տասնեակ գազաններու դիմագրաւելով, այդ սոսկալի վերջերս ստացած էր իր բեւ պանծալի յիշատակ իր փոստուր յազրթանակին, գալու եւ հազարաոր մայրերու եւ երգայրներու արցունքները սրբելու համար, ան միթէ՞ պիտի հանդուրժէր լսել այդ ազգապարտաւեր իր հօրմէն, որուն արդէն մինչեւ այդ ստեն ըրած դաւաճանութիւններուն չկրնալով համբերել, եւ կած էր նոյն իսկ այդ երեկոյ վերջ մը գոնէ անոր ազգապարտ կեանքին եւ իրեն անուան վրայ բերուած արտաք մարտի:

—Ինչ է նպատակը, մոնչեց Սմբատ, այս անգամ իսկական առաջակի արիւնարբու ու մահազգեցիկ կերպարանք մը առնելով:

—Տանս մէջ աւագակ, մարդասպան որդի չեմ ուզեր, ազօթքի տունս չեմ կրնար պղծել...

—Աւագակ... մարդասպան... կրկնուեցաւ, սրբապօրծուէ ուրեմն, եւ

թէ պղծուեցար որդւոյդ ներկայութեամբ, ու դեռ վերջին բառը չաւարտած, դաշտը կ'աճակի արագութեամբ խրեց հազարներու արցունքով աղբիւրներ կ'առուցանող հօրը կրծքին, թաւապտոր գտտին փոստեցաւ ճապարակ իրանը:

—Անօրէն... դաւաճան... հայրասպան... կը լսուէր հեղձամղով ձայնով մը:

Սմբատ, քոնի մը բոպէ անչարժ մնաց հօրը հոգեվորք դիակին առջեւ, Ո՞վ գիտէ, յիշատակներու ինչպիսի երազ մէք որ կանցնէր երեւակայութեան մէջէն, դանդաղ, երբուն ու վրէժխեղ իր անուրջներ, Սէր, որդիական, սէր՝ եղբայրութեան ու հանրութեան, ու վերջապէս սէր Հայրենիքի, Ազգութեան, որ եկած ընկճածէր ամէնը, բոլորը մոռցնել տուած:

Չէ, Հայրենիքի սիրով տոգորուած երիտասարդին՝ որդիական սէրը գոյութիւն չունէր այլեւս, մանաւանդ երբ ան իր գեղեցիկագուրուած բանակին խաղալ թշնամին ու ժահրոտ թոյնն էր, ու այս ինքնամոռացութեան րուպէն հազիւ լրացած էր, երբ կրկին նկատեց հօրը ցաւազին գալարուեմներու սկսած, չըթնեց շարժելով, երկու բռն գոբու թուաւ:

—Արժանի ես...

Ու մինչ սենեակէն հեռանալու վրայ էր, ձայն մը հասաւ ականջին:

— Հայր, գուցէ տուր պատիժը...

Իբր ճշմարիտ զուակր արժանաբար զայն կերգէ կենդանի պատկերներով, որոնք գիտակցութիւն կը ցանեն, միտքերը կը յեղափոխեն, գլուխները կարծարծեն, ոգիները կը հրահրեն եւ նորանոր երկնակամար ու հեռապատկեր կը բանան՝ արդի սուտ աշխարհի ու կեղծ բարոյականի ճշման տակ տառապող աշխարհներու առջեւ... իսկ ալ աւելի կը հառաչէ անօգնական հայ ազգիկը, այո, հայ ազգիկը ահապահան «ընտանիքի» խեղդել ու թունաւոր մթնոլորտին մէջ, որուն սիրտը «բարի ծնողները» ի խաչ կը հանեն եւ ոսկի տոպրակին դիմաց անմիտ ու գաղան հայրերը ու «մայրերը» կը կեղեքեն իրենց երիտասարդ աշխարհներուն հոգին ու սիրտը: «Հայրերը», այս թշուառները, չգիտեն թէ մենք նոր ենք իսկ այլաբան հին է եւ թէ ամեն նոր բան հինին հակադրութիւնն է, Իայց ոչ, անոնք ալ, մեր ազնիւ ընկերակիցները, պիտի գան մեր քով, այո, մեր քով, որովհետեւ ոչ ոք կարող է ետ դարձնել կեանքի անիւր ու մարել ինչ որ շմարիր... Ուրեմն... ուրեմն, քաղաքաւորութիւն, հայ ազգիկներու, ձերն է ապագան... Այո, դուք ալ մեր քով պիտի գաք...

Թարգմանեց Մարօ

—Յաջող է, եղաւ իր առաջին խօսքը, երբ մտնեցաւ Սմբատին:

—Հիմա խօսելու ժամանակ չէ, արգէն ժամանակը անցած է, չո՛ւտ, միտ թող ու հեռացիր:

Ու այլևս բառ մը չ'արտասանեց Սմբատ, ցատկեց նժոյզին վրայ, ու մտրակի քոնի մը ուժգին հարուածներ իջեցնելով կողին, աղմկալից աղջամուղջին մէջ շուտով անյայտացաւ:

Մրտօ՝ դեռ հոն կանգնած, կարծես ետանդոտ երիտասարդին ուրուսկանը սե նել կը ջանար խաւարին մէջ հրացաններ արբշխո նայուածքով մը որ արգէն անհետացած էր:

—Այո, արժանի ես հայրենիքի արժանաւոր զուակր կոչուելու, վերջապէս սկսաւ ականջս խօսիլ ետեւէն, թո՛ղ քեզ անարգ կոչեն, թո՛ղ քեզ սաւազակ՝ որակեն, թո՛ղ քեզ զնայրասպան մոռնաւ սուրբ է նպատակը, վեհ է հոգիդ...»

Ու ինքն ալ իր քայլերը ուղղեց դէպի տուն. թախծապատ ու խոր մտածուելներու մէջ ընկղմած, այն երիտասարդին համար, որուն անբաժան ընկերը ըլլալ խօստացած տարիներ առաջ դեռ կը շարունակէր ըլլալ — միշտ անվեհեր, միշտ յանդուզըն, միշտ անձնուէր:

Լ'նտոն Տոպակ

ՎԵՐՁ

բայց ան շատոնց սովորած էր ատոնց ոչնչութիւնը եւ գիտէր թէ առաքինի ճշմարիտ ու անձնուրջ որդւոյ մը այս արդար բողոքին վրէժը բնաւ կարօտութիւն չունէր սարակ հօր մը ներողամտութեան ու անէծքին, ուստի նախատիքի ու զգուսնքի պաղ ժպիտ մը սահեցնելով դէմքին վրայէն անշուկ իջու փողոցը:

Վերը՝ դեռ երկինքու երկիր պատուելու ստափճան որոտուեմներ կը լքուէին, եւ կ'աճակներու անընդհատ շրջանը դեռ կը շարունակուէր խուլ մոնչիւններով ու սուտոր լոյսերով, վարք քամին, ու նացող առիծի նման անմիջապէս կը յաջորդէր անոնց, կարծես պակաս մը լրացնելու համար:

Սմբատ քանի մը անգամ ուժգին կերպով սուլեց, բայց ձայնը այդ անունի հղումն մէջ ցնդելով անպատասխանի մնաց, Ու արդէն այս սուլումը բուսական սեւած էր, երբ հետուէն ձիւն դոփին մը լսեց, որ թէպէտեւ ուրիշութեան ժպիտ մը փայլեցաւ դէմքին վրայ, սակայն այդ ինչու մը չուտով կ'ստեղծանքի փոխուել սկսաւ: Սուլուին եղանակը փոխեց, ու հօրը արիւնով ներկած սուրբ թշնամիին կուրծքն ալ մխելու պատրաստուեցաւ, — Իթէ երբէք թըշնամի մ'էր:

Իայց, ո՛չ, պատասխանը ծանօթ էր իրեն, եկողը Մրտօն էր, որ անհող անհող երգ մը կը մոլորար:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Մշակոյի մէջ կը կարգանք որ Ասորպատականի առաջնորդական փոխանորդ Ընձակ վարդապետը Մահլամ գիւղի մէջ իր ձեռովը եղակի դատաստան մը ըրեր է :

Ութ կիներ, որոնք կը մեղադրուին իրենց վարքի թերութեան մէջ, գուրս են բերուեր հասարակութեան առջեւ, դատուեր են հրապարակաւ և խտրութեան ծեծուեր : Ս. Կիներէն հինգը պոռնիկ կը հռչակուին և ասոնց մազերը հրապարակաւ կը կտրուին : Այդ հինգ կիներն ալ ամուսիններ և զաւակներ ունին :

Կեցցէ վարդապետական արդարադատութիւն : Մովսէսէն ալ խիստ է եղեր Ընձակ վարդապետը :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նախարարներուն դատա վճռին յայտարարութիւնը կրկին յետաձգուեր է :

—Սօֆիայի մէջ ընկերվարականներու և Մակեդոնացիներու միջեւ մեծ ընդհարում տեղի ունեցեր է : Երկու կողմէն ալ վիրաւորեալներ կան :

Ընդհարման պատճառը այն է որ ընկերվարականները ուզեր են հակառուսական և հակաթրքական միջին կ'ընել ի նըպաստ Ռուսիոյ մէջ շարժարուող հրեաներուն և Թուրքիոյ Մակեդոնացիներուն :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Անցեալ ուրբաթ օր Սուլթանը սելամըքէն վերջը Պուլկարիոյ պատգամաւոր պարոն Նաչէվիչին հետնաստակցութիւն ունեցեր է : Խօսակցութեան արդիւնքը որոշապէս յայտնի չէ :

—Ռուս և աւստրիական կառավարութիւնները թուրք կառավարութեան վրայ առ այժմ ճնշում չպիտի գործ դնեն Մակեդոնական բարենորոգումները իրագործել տալու համար : Բայց Մակեդոնիան խաղաղութիւն պէս կրկին պիտի ճնշեն :

ՌՈՒՍԻԱ

Հրէուհի մանկաբարձ մը փորձեր էջսպաննել Բիէվի Նահանգապետ զօրավար Նովոգրին :

ՅՐԱՆՍԱ

Թայմը կը հաղորդէ թէ նախագահ Լուպէի, դէպի Լոնտոն՝ պիտի ուղեկցի նաեւ արտաքին գործոց նախարար Տլէկասէն, թէ-

եւ անգլիական կառավարութեան հետ քաղաքական խնդիրներու մասին չը պիտի խօսուի այդ այցելութեան միջոցին :

ՍԵՐՊԻԱ

Մեր ընթերցողներուն արգէն յայտնի է Սրպիոյ արքայական տան ոչնչանումը իրենց պալատին մէջ :

Սրպիական ժողովուրդը առանց յուզումի և առանց տխրութեան ունէ նշանի մը լսեց իր արքայական ամուսին սպանման լուրը ու մայրաքաղաքը զարդարուեցաւ դրոշակներով, կարծես մեծ տօն կը կատարուէր : Ապացոյց որ Ալեքսանտր սիրուած չէր :

Սլիքսանտր երիտասարդ թագաւորը մէկ քանի տարուան մէջ երկրին սահմանադրութիւնը քանի մը անգամ փոխեց, պետական մարդոց և ժողովրդին հետ խաղաց քէյֆը ուզածին պէս, ասանց մաքէն անցնելու որ օր մը իրեն սրինգին տակը պարոզ ժողովրդին որդիքը վերջապէս պիտի այլևս չըզուին Օպրէնովիչներուն խեղկատակ մնացորդներէն եւ իրենց վրէժը պիտի լուծեն :

Ինչպէս կերելի Ալեքսանտր չափը անցուցած էր արգէն որ գաւադութիւնը այնքան մեծ յաջողութեամբ կատարուեցաւ և երբեմն ստիպմամբ զինքը փառաբանողները այսօր մեծ չըրճուանքով անոր եղբրական մահը կը ծափահարեն : Ի՞նչու ոչ մէկ վեհապետի մահուան հանդէպ այդչափ սառնասիրտ անտարբերութիւն չէր եղած ինչպէս Օպրէնովիչներուն այլասերած այդ մնացորդին եղաւ :

Թագաւորական զոյգի դիակներն անգամ անարգուած են կսուի բայց ճշմարտութիւնը այն է որ արքայազայել թաղում տեղի չէ ունեցած :

Եւրոպական քանի մը թերթեր ինչպէս և թագաւորին մայրը կը յայտարարեն թէ անոր կորստեան պատճառը եղաւ Տրակա թագուհի որ ժողովրդէն սիրուած չէր, և վերջերս աւելի ատելի դարձած էր, որովհետեւ Ալեքսանտրը համոզած էր որ իր հղբայրներէն մին Սրպիոյ գահաժառանգ հռչակէ :

Այսպէս թէ այնպէս այսօր սըրպիական այդ արքայական ցեղը բոլորովին ջնջուեցաւ, և հիմակ Գարակէօրկէվիչներէն մին է որ թագաւոր կը հռչակուի : Թերթերը կը հաղորդեն որ եւրոպական պետութիւնները ամենքն ալ գոհ պիտի մնան այդ ընտրութենէն իսկ սերպ ժողովուրդն ալ շատ գոհ պիտի ըլլայ որովհետեւ մեծ յոյսեր ունի ընտրուելիք թագաւորին վրայ :

Պալքանի ժողովուրդներէն ամենէն դժբաղքը, իրենց վեհապետներուն վերաբերմամբ, Սերպիան էր : Միլան եւ Ալեքսանտր ամեն օր նոր իրադիր կը խաղային խեղճ սերպ ժողովրդին գլխուն, ու այսօր տանջված և շարունակ քաղաքական ներքին ու արտաքին փոթորիկներու ենթակայ սրպերը ինքզինքնին ազատած կզգան : Կը մաղթենք որ այս փոթորիկը վերջինը ըլլայ :

—Պուլկ. հեռ. քործակալութիւնը կը հաղորդէ ամսոյս 2ին Գարակէօրկէվիչ թագաւոր ընտրուէր է Սկուրչինայի կողմէն : Ժողովուրդը ուրախութեան ցոյցերով ընդուներ է նոր թագաւորը :

—Նոր կառավարութիւնը բոլոր քաղաքական յանցարորները ազատ արձակեր է :

ՉԻՆԱՍՏԱՆ

Կառավարութիւնը արտօնած է երկաթուղի շինել Շանկայէն մինչև Բէքին : Շինողները միայն Անգլիացիներ են :

ԱՂՊՆԻԱ

Իտալիոյ մէջ գործող Ալպանացի կարեւոր գործիչներուն մէջ, մտակայ համաժողովին պատճառով, անհամաձայնութիւններ ծագեր են : Տրամադրութիւն կայ եղեր քան մի գործիչներ ժողովի չը հրաւիրել, որը և ժողովրդին վրայ գեշ ապաւորութիւն գործեր է : Այնպէս որ կը կարծուի թէ համաժողովը բացասական հետեւանքներ պիտի ունենայ : Յետոյ դժգոհները միտք ունին հոկտեմբերին ժողով գումարել Հառմի մէջ :

Այդ անհամաձայնութիւններու պատճառով Կարեպալտին յայտարարած է որ ինք ժողովին չը պիտի մասնակցի, հրաժարած է նաեւ Բէնիչին, նոյնը կը մտածէ ընել և Իշխան Գասթրիոթա :

ԹՈՒՐԿ ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ՊՈՏԵՐԱԶՄ

Սօֆիայէ ոթանալ կը հեռագրեն հետեւեալը : «Թուրքերը Պուլկարիոյ բոլոր սահմաններուն վրայ զօրք թնդանթ և ռազմամթերք կը թափեն պատահական պատերազմի մը համար պատրաստուելով : Պուլկարիան ալ աներեւակայելի եռանդով կը պատրաստուի » :

ԻՏԱԼԻԱ

Քանի մը օր առաջ ձենովայի մէջ ներկայացման մը միջոցին ժողովուրդը հակաաւստրիական ցոյց ըրեր է :

ներկայացումէն վերջը ցոյցարարները դիմեր են դէպի աւստրիական հիւպատոսարանը, բայց ոստիկանութիւնը արգիլեր է :

ՐԱՅ ՆԱՄԱԿ

Ներդուլթիւն բոլոր այն պարուններին, որոնց անձնապէս ինձ ուղղած նամակներին չեմ կարողացել պատասխանել երկարատեւ բացակայութեան պատճառաւ : Վարդօ

1903 յունիս 4 Վառնա

ՆՊՄԱԿԱՏՈՒՓ

Ֆիլիպէ - Պ. Նշան, —Փէղպան քաճօրուած Սեբաստացի Մովսէս վեհապետական հասցէն հաճեցէք զրկել խմբագրութեանս :

ԳԵՂՈՒՆԻ

Անուան իսկապէս համապատասխանող պատկերազարդ մեծադիր թերթը լոյս տեսաւ : Կը բաղկանայ փաստահօգ փայլուն թղթի վրայ տպուած 10 միծաղիք քառամալ թերթերէ, գեղեցիկ, ինը գոյնով կողմի մը մէջ կտրուած : Բազմաթիւ ազգային կեանքէ առնուած նորանոր պատկերներէ քառ, Գեղունին շարքարտած է նաեւ եօթը հատ բազմապատկեր պատկերներով, որոնց մէջ յատուկ ուշ կը դրուէ Աւարայրի դիւցազներու խումբաներկարն, Մենք ներկայ ազգովս չենք ուզեր և ոչ իսկ կարող ենք այս նոր Գեղունիի նկարագիրն և մատենախօսական ընել թէ գրական և թէ գեղարւեստական տեսակետով : Այդ թողով ուրիշներու, միայն այս կըսենք, որ ինչպէս պատկերներու, եռյակէս և յօդուածներու յատուկ ընտրութիւն եղած է : Այս Գեղունին ամենայն կերպով կը գերազանցեցար լոյս տեսաները, և յիշուի կրկին կանգնել իբր գրական և գեղարուեստական թանկագին կոթող մը հայ գրականութեան մէջ : ԳԵՂՈՒՆԻ ԿՊՐԹԷ ՄՐԱՅԵՆ 10 ՅՐ. ԿԱՍ 4 ԲՈՒՐԸԻ

Գեղունին ամեն կողմ տարածելու համար, վիճակահանութեան կը զընենք մեր ապարանէն լոյս տեսած չարք մը արժէքաւոր գրքեր : Տասը օրինակ մէկ անգամէն գնողները այդ վիճակահանութենէն մէկ թիւ կ'ունենան, քսան օրինակ գնողները երկու և այլն :

Գեղունին կը զրկուի յատուկ դասով ապահովագրեալ, բազմաթիւ օրինակները կը զրկուին արկղներով : Որոնք որ մեզ հետ յատուկ հաշիվ չունին, պէտք են գրամը կանխիկ զրկել : Գեղունին ստանալու համար պէտք է դիմել Կետեւեալ հասցէին :

Էմբրոիկոնի Արւիկիէն Ս. Լազար վեհապետ (Իսպիլայ)

Отговорникъ Мурадъ-Браносянъ

Печатница „Взаимность“ Варна